


REGIONE del VENETO



Castelfranco Veneto

—
Museo Casa Giorgione
Piazza S. Liberale

San Zenone degli Ezzelini

—
Villa Marini Rubelli
Via T. Rubelli 2

NOÈ BORDIGNON

DAL
REALISMO AL
SIMBOLISMO

18 Settembre 2021
16 Gennaio 2022

www.mostrabordignon.it

@MuseoCasaGiorgione @Villamarinrubelli



ՆՈՅԷ ՊՈՐՏԻՆԻՈՆ
ԻՏԱԼԱՑԻ ԳԵՂԱՆԿԱՐԻԶԻ

ՄԱՀՈՒԱՆ
100 ԱՄԵԱԿԻՆ

ԻՏԱԼԱՑԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՆՈՅԷ ՊՈՐՏԻՆԻՈՆ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՅՐԵՐԸ

Նոյէ Պորտինիոնի Noè Bordinon (1841-1920) մահուան հա-
րիւրամեակը նշելու համար Թրէվիզոյ նահանգի աւելի քան տաս-
ներկու համայնքներ մշակութային ձեռնարկներու շարք մը կազ-
մակերպած էին 2021-2022ին: Հիմնական երկու բեւեռներու վրայ
կեդրոնացած էր ամբողջ տօնախմբութիւնը: Առաջինը՝ արուես-
տագէտի ծննդավայրը՝ Քասթէլֆրանքոյ Վենետոյ եւ երկրորդը՝
Սան Զենոնէ տէլլի էծծէլլինի, ուր մահացած եւ թաղուած է:

Մխիթարեան միաբանութիւնը եւս բերաւ իր մասնակցու-
թիւնը, թէ՛ ցուցահանդէսին տրամադրելով Ս. Ղազարի մէջ պահ-
պանուող իւղանկարները, թէ՛ վանքի Թանգարանի մէջ ցուցադ-
րելով, ինչպէս նաեւ զեկոյցներով հարստացնելով յորելինական
հանդիսութիւնները:

Մեծանուն զեղանկարիչ Նոյէ Պորտինիոն, անցեալին երկու
անգամ յիշատակուած է Բազմավէպի էջերուն մէջ: Առաջինը 1906
թուականին իր վաղամեռիկ որդիի մահուան սգալի առիթով Հ.
Կարապետ Տէր-Սահակեանի կողմէ գրուած բանաստեղծութեամբ¹,
իսկ երկրորդ անգամ նկարիչի մահուան գոյժը փոխանցող Հ. Քե-
րովրէ Զրաքեանի յօդուածով՝ 1921 թուականի Յունուարի թիւին
մէջ:

Նոյէ Պորտինիոն 1886ին ամուսնանալով Մարիա Ծանքիի
հետ վերջնականապէս կը հաստատուի Վենետիկի Տորստուերոյ
Թաղամասը Մուրատ-Ռափայէլեան Վարժարանի հարեալանու-
թեամբ: Մեծ հաւանականութեամբ այստեղ է որ աւելի սերտ ծա-
նօթութիւն մշակած է Մխիթարեան հայրերու հետ:

1 Տէր-ՍԱՀԱԿԵԱՆ, Հ.Կ., *Փոքրիկ Ակարիչը*, ի «Բազմավէպ» ԿԴ (1906), քիւ
12, 572; ԿԵ (1907), քիւ 4, 155-157:

Առանձնայատուկ մտերմութեան մը ապացոյցը կը նկատենք այն՝ որ 1900 թուականին Նոյէ անձամբ գեղանկար մը նուիրած է Հ. Յուսիկ Վրդ. Մեհրապեանին (1853-1914), իտալերէն լեզուով գրառելով փայտեայ շրջանակի ներքեւի կեդրոնական հատուածին՝ «Bordignon alla Speranza - 1900» - Պորտինիոնը Յոյսին - 1900: Իսկ դարձերեսին՝ շրջանակի վերին հատուածին հայերէնով գրուած է «Պորտինիոնը նուիրած է այս պատկերը Հ. Յուսիկին ի Ս. Զեմոն յամին 1900»:

Միջազգային ճանաչում վայելող գործունեայ եւ վարպետ նկարիչը կը հրաւիրուի իր գեղանկարներով ճոխացնելու Վենետիկի յարակից նահանգներու տարբեր եկեղեցիներ: 1875-1879 թ-րէվիզոյ նահանգի Ս. Զենոն գիւղի տաճարն ամբողջապէս կը զարդարէ հոգեւոր զանազան տեսարաններով եւ յատկապէս «Վերջին դատաստանով»: Նշենք որ Միսիթարեան հայրերու ներկայութիւնը այդ տարածաշրջանին մէջ սկսած է շնորհիւ Մուրատ-Ռափայէյեան Վարժարանի Ագոլոյի ամարանոցին եւ ապա 1896 թուականէն միաբանական ամարանոցին՝ Ս. Զենոն գիւղի մէջ, ուր բնակութիւն հաստատած էր նաեւ Պորտինիոն ընտանիքը:

Միսիթարեան հայրերը սերտ կապ ունեցած են գեղանկարիչի հետ: Այս մտերմութեան վկաներն են հեղինակի տասէ աւելի տարաբնոյթ աշխատութիւնները որ կը պահպանուին Ս. Ղազարի մայրավանքի պատկերասրահին ու եկեղեցիին մէջ:

Իւզանկար սրբապատկերներ, առօրեայ կեանքը պատկերող իւզանկարներ, ինչպէս նաեւ Միսիթարեան վաստակաշատ հայրերու դիմանկարներ, որոնց մէջ իւրայատուկ վայելչութեամբ կ'առանձնանայ հաստափոր գիրքերու վրայ կքած ալեհեր ծերունի մեծն Ալիշանի պատկերը: Առանձին յիշատակութեան արժանի են այլ երեք սրբանկարներ, Ս. Ընտանիքի, Ս. Յովհաննէս Մկրտչի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի, որ միաբաններու յանձնարարութեամբ Պորտինիոն նկարած էր Խոտորջուրի, Կարմիրքի եւ այլ Միսիթարեան առաքելավայրերու եկեղեցիներու խորաններուն համար, որոնք դժբախտաբար ցեղասպանութեան զոհ գացած են²:

Տամկանկարներու պատուէրը ստացած է միաբանութեան երկհարիւրամեակը նշելու մեծահանդէս տօներուն ընդառաջ, եւ

2 ԶՐԱՔԵԱՆ, Հ.Ք., նոյ Պորտինիոն, ի «Բագմավէպ» ՀԹ (1921), քիւ 2, 64:

եկեղեցւոյ գաւիթի առաստաղին երեք հիանալի շրջանակաձեւ պատկերներով ներկայացուցած է Պահպանիչ Որդեգրաց Ս. Կոյս Աստուածածինը, Մխիթարի տեսիլքը եւ Մանասէ ու Մարիամ սրբակենցաղ երկու կոյսերու մարգարէական երազը:

Այս ամէնը ակնյայտօրէն կը պատմեն այն մտերմիկ ու սերտ զօդի մասին որով Մխիթարեան հայրերը եւ Նոյէ Պորտինիոն կապուած էին իրարու:

Հ. ՍԵՐՈԲ ԶԱՄՈՒՐԼԵԱՆ